

## **ԳԱՎԱՌԱԳԵՏԻ ԱԵՐՈԲ ՔԵՄՈՒՐԳՎԱՆՈՏՐՈՒԹ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԹՎԱՔՎԱՆԱԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԶՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՄԱՆԵԱԲԱՆԱԿԱՆ ՎԻճԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

**Ս. Մ. ԳՈՒՐՈՎԱՅԻ**

**ԳՊԴ բնագիտական ֆակուլետի մագիստրատուրայի կենսաբանության բաժնի  
առաջին կուրսի ուսանողութի**

**Հ. Ն. ՓԱՆՈՍՅԱՆ**

**Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,**

**ԳՊԴ պրոֆեսոր,**

**ԳՊԴ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոն**

Մեր հանրապետության ամենախոշոր ջրային էկոհամակարգը՝ Սևանա լիճը, ընդամենը կեսդարյա ժամանակահատվածում ենթարկվել է տրոֆիկ մակարդակների արագ վերափոխումների. եթե անցյալ դարի սկզբում այն օլիգոտրոֆ լիճ էր, ապա այսօր արդեն էվտրոֆացման փուլում է [1-3]: Սևանա լճի էվտրոֆացումը պայմանավորված է ոչ միայն ներջրամբարային պրոցեսների բացասական փոփոխություններով (ջրի մակարդակի արիեստական տատանումներ և անթրոպոգեն այլ գործոններ), այլ նաև ջրահավաք ավազանում տնտեսության տարբեր ճյուղերի հնատենսիվացմանը և ռեկրեացիոն ծանրաբեռնվածությամբ [4]: Հետևաբար լճային էկոհամակարգի տրոֆիկ շղթանների և նրա առանձին օղակների էկոլոգիական փոփոխարաբերությունների վերլուծության համար էական նշանակություն ունեն լիճ թափվող գետերի հիդրոկենսաբանական, այդ թվում՝ մանրէաբանական ուսումնասիրությունները:

Մանրէները ջրային էկոհամակարգի տրոֆիկ շղթայի կարևոր բաղադրիչներն են, մասնակցում են հիմնական կենսածին տարրերի շրջանառությամբ և, հետևաբար, որոշիչ նշանակություն ունեն էկոհամակարգի բնականոն կենսագործունեության համար [5, 6]: Սևանա լճի մանրէաբանությանը վերաբերող ուսումնասիրությունները թեև շարունակական բնույթ չեն կրել, սակայն սկսած անցյալ դարի կեսերից, որոշակի ընդմիջումներով, իրականցվել են մի շարք գիտնականների կողմից [1-3, 7]:

Ներկայումս իրականցավում են լճի ջրահավաք ավազանը կազմող գետերի ջրաֆիզիկական, ջրաքիմիական և ջրակենսաբանական տարրեր բնույթի հետազոտություններ [4], սակայն լիճ թափվող գետերի մանրէաբանական կազմը դեռևս ուսումնասիրված չէ: Սևանա լճի մակարդակի արիեստական բարձրացման ներկա պայմաններում իրատապ են դառնում այդպիսի հետազոտությունները: Յաշվի առնելով այս հանգանանքը՝ մեր կողմից իրականցվել են Սևանա լճի ջրահավաք ավազանի խոշոր գետերից մեկի՝ Գավառագետի մանրէաբանական հետազոտություններ՝ գնահատելու համար այդ գետի ջրերի ազդեցությունը լճային էկոհամակարգի վրա:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել Գավառագետի աերոբ քենորգանութերությունը բակտերիաների քանակական կազմը և գնահատել ջրի սանիտարական մանրէաբանական վիճակը սեղոնային կտրվածքով:

**Ուսումնասիրության առարկան և մեթոդները:** Հետազոտության նյութ են

հանդիսացել Գավառագետի ակունքից մինչև գետաբերան 10 տեղանքներից՝ ակունքից, մինչև Գեղարքունիք գյուղ հատվածից, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Բատիկյան գյուղերից, Գավառ քաղաքի երեք հատվածներից (մինչև Գավառ քաղաք, թթու ջուր հատված, Գավառ քաղաքի դուրս եկող հատված) Նորատուս գյուղից և գետաբերանի հատվածից վերցված ջրի նմուշները: Նմուշահանումը իրականացվել է 2010 թ.-ի հոկտեմբերին, 2011 թ.-ի փետրվար և ապրիլ ամիսներին: Զրի նմուշները նախօրոր ախտահանված ապակե տարաներով տեղափոխվել են լաբորատորիա՝ մանրէարանական հետազոտության համար:

Աերոր քեմորգանուհետերոտրոֆ մանրէների քանակը որոշվել է մսապեպտոնային ագարացված (ՄՊԱ) սննդամիջավայրի վրա նմուշի որոշակի նոսրացումների ցանքով  $37^{\circ}\text{C}$  և  $200\text{C}$  ջերմաստիճաններուն 24 ժամ ինկուբացնելով [8]: Քանակական որոշման արդյունքները արտահայտվել են գաղութ առաջացնող միավորներով (ԳԱՄ): Olympus CH-2 լուսային մանրադիտակի կիրառմամբ որոշվել են բջիջների ծառ և շարժումը: Ըստ Գրամի մերկումը որոշվել է տարբերակիչ ներկնան ընդունված մեթոդով [8]:

Երկփուլ խմորման (տիտրման) մեթոդով Գավառագետի ջրային նմուշներում որոշվել են սանիտարական բակտերիոֆիլական վիճակը գնահատող երկու ցուցանիշներ՝ կոլի-տիտրը և կոլի-ինդեքսը [8]:

Կոլի-տիտրը ջրի այն նվազագույն ծավալն է (մլ), որում հայտնաբերվում են աղիքային խմբի մանրէներ: Կոլի-ինդեքսը աղիքային խմբի մանրէների այն քանակն է, որը պարունակվում է 1 լ հետազոտվող ջրում: Նմուշներում կիրառվել են Կեսլերի և Էնդոյի սննդամիջավայրերը [8]:

**Արդյունքներ և թննարկում:** Գավառագետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի Սպիտակասար գագաթի հյուսիսային լանջից, 3320 մ բարձրութունից և թափվում է Սևանա լիճ: Երկարությունը 24 կմ է, ավազանը 480 քառ. կմ, սնումը խառն է, հորդացումը՝ ապրիլ-մայիսին [9]:

Գավառագետի ակունքից մինչև գետաբերան տարբեր հատվածների ջրի նմուշներում ՄՊԱ-ի վրա աճող աերոր քեմորգանուտրոֆ մանրէների ընդհանուր քանակական և սանիտարական-մանրէարանական հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է ներկայացված այուսակից, աերոր հետերոտրոֆ մանրէների քանակը հետազոտված նմուշներում տատանվել է 5-ից մինչև 1520 ԳԱՄ/մլ: Դամեմատարար փոքր է աերոր հետերոտրոֆ բակտերիաների թիվը ակունքի հատվածում: Ուսումնասիրված բոլոր նմուշներում գերակշռել են աերոր, ասպորոգեն, գրամբացասական գնդածն և ծողածն մորոֆոլոգիա ունեցող բակտերիաները:

Այսուսակում բերված են նաև Գավառագետի սանիտարական-մանրէարանական հետազոտության արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ջրի նմուշներում հայտնաբերվել է աղիքային խմբի բակտերիաների մեծ քանակություն: Սեղոնային կտրվածքով ակունքից մինչև գետաբերան կատարված հետազոտություններում մանրէների թիվը աստիճանաբար աճում է: Մանրէների առավելագույն աճ դիտվում է գարնանը:

Կոլի-ինդեքսի և կոլի-տիտրի համեմատաբար փոքր արժեքներ են գրանցվում միայն գետի ակունքից վերցված ջրային նմուշներում: Մնացած հատվածներում կոլի-ինդեքսի և կոլի-տիտրի ցուցանիշները գերազանցում են գետերի համար

սահմանված սանիտարական-մանրէաբանական ցուցանիշները:

Սանիտարական-մանրէաբանական նման ցուցանիշների պատճառը հավանաբար կոյուղաջրերի մաքրիչ կայանների բացակայությունը և շրջակա բնակավայրերի անասնապահական տնտեսությունների չվերահսկվող արտանետումներն են: Այս հանգամանքը հատկապես կարևոր է ռեկրեացիոն գոտիներում սանիտարական վերահսկողության պատշաճ կազմակերպման համար:

#### **Աղյուսակ 1**

**Գավառագետի ակունքից մինչև գետաբերան տարբեր հատվածների  
ջրային նմուշների աերոբ քեմորգանոտրոֆ մանրէների ընդհանուր քանակը  
և սանիտարական-մանրէաբանական հետազոտության արդյունքները**

Նմուշահանձնանայություն	Աերոբ հետերոտրոֆ բակտերիաներ գԱՄ/մ <sup>3</sup>			Կոլի-ինդեքս			Կոլի-տիտր		
	2010 աշուն	2010-2011 ձմեռ	2011 գարուն	2010 աշուն	2010-2011 ձմեռ	2011 գարուն	2010 աշուն	2010-2011 ձմեռ	2011 գարուն
Ակունքի մոտ	5	-	3	<9	-	<9	>111		>111
Մինչև գեղարքունիք գյուղ հատվածը	20	-	-	10	-	-	105		-
Գեղարքունիք	1000	-	27	>2380	-	>2380	<0,4	-	<0,4
Լանջաղբյուր	1520	-	∞	>2380	-	>2380	<0,4	-	<0,4
Բատիկյան	1490	-	∞	>2380	-	>2380	<0,4	-	<0,4
մինչև Գավառ քաղաք մտմող հատվածը	1470	1060	2000	>2380	>2380	>2380	<0,4	<0,4	<0,4
Թթվու ջուր հատված	1140	790	-	>2380	>2380	-	<0,4	<0,4	-
Գավառից դուրս եկող հատված	1180	+∞	∞	>2380	>2380	>2380	<0,4	<0,4	<0,4
Սորատուս գյուղ	1350	-	+∞	>2380	-	>2380	<0,4	-	<0,4
Գետաբերան	1430	-	+∞	>2380	-	>2380	<0,4	-	<0,4

Ստացված արդյունքների հիման վրա Գավառագետի ջրերի էկոլոգիական որակը կարելի է գնահատել շատ աղտոտված, որը հաստատվում է նաև այլ հեղինակների կողմից որոշված ջրաքիմիական և ջրակենսաբանական ցուցանիշների թվային մեծություններով [4]: Անամա լիճ թափվող աերոբ քեմոհետերոտ-

րոֆ մանրէների (որոնք հանդես են գալիս տրոֆիկ շղթաներում որպես հիմնական դեստրուկտորներ) այդ մեծ քանակությունը խթանում է խորացող էվոլուցիան պրոցեսները և բացասական ազդեցություն ունենում լճային էկոհամակարգի վրա:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ղամբարյան Մ. Ե.** Микробиологические исследования оз. Севан. Ер.: Изд-во АН Арм. ССР, 1968, 166 с.
2. **Վարձանյան Գ. Ս.** Видовой состав и количественное распределение бактериальной и грибной фло-ры озера Севан и впадающих в него рек: Автореф. дис. на соиск. уч. степ. канд. биол. наук. Институт Микробиологии НАН РА, Абовян, 1988, 21с.
3. **Տիգրենյան Օ. Ի.** Численность бактерий и продукция их биомассы в воде озера Севан. Микро-биология. Т. 51, № 4, 1982, с. 664-668.
4. **Չովհաննիսյան Յ. Յ., Խվանյան Ա. Ա., Դավթյան Ա. Ա., Յամբարյան Լ. Ռ., Մկրտչյան Ժ. Յ., Չովսեփյան Ա. Ա., Մամյան Ա. Ա.** Սևանա լճի և նրա ջրահավաք ավագանի հիդրոկոլո-գիական ուսումնասիրություններ (2009). Յայաստանի կենսաբ. հանդես, 2010, 2 (62), 81-85 էջ:
5. Экология микроорганизмов. Под ред. **Ա. Ի. Ներսոսավական**, М.: Издательский центр "Академия", 2004, 272 с.
6. **Ղամբարյան Լ. Բ.** Сезонная сукцессия фитопланктона, в период повторного понижения уровня вод оз. Севан. Автореф. дис. на соиск. уч. степ. канд. биол. наук. Институт Ботаники НАН РА, Ереван, 2001, 24 с.
7. **Panosyan H. H., Tozalakyan P. V., Popov Yu. G.** Study of bacterioplankton of Sevan Lake. The 3<sup>rd</sup> International Scientific Conference ‘Lake ecosystems: biological processes, anthropogenic transformation, water quality’, Minsk – Naroch, Belorussia. 2007, p. 243.
8. **Ներսոսավական Ա. Ի.** Практикум по микробиологии. М.: Изд-во АН РФ, 2005, 603 с.
9. Յայկական համառոտ հանրագիտարան, 1-ին հատոր, ՅևՀ գլխ. Խմբ., 1990, էջ 619:

#### ЧИСЛЕННОСТЬ АЭРОБНЫХ ХЕМООРГАНОТРОФНЫХ БАКТЕРИЙ И ОЦЕНКА САНИТАРНО-БАКТЕРИОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ВОДЫ РЕКИ ГАВАРАГЕТ

**M. S. Guroghlyan  
O. O. Panosyan**

В статье изучен количественный состав аэробных хемоорганотрофных бактерий вод реки Гаварaget и оценено санитарно-бактериологическое состояние речной экосистемы. Колониеобразующие единицы аэробных хемоорганотрофных бактерий в водных прobaoх варьируют в пределах от 5 (исток реки) до 1520 (вниз по реке к устью реки), что свидетельствует о сильной антропогенной загрязненности речной экосистемы.

#### QUANTITY OF AEROBIC CHEMOORGANOTROPHIC BACTERIA AND EVALUATION OF SANITARY MICROBIOLOGICAL STATUS OF WATER OF THE GAVARAGET RIVER

**M. S. Guroghlyan  
O. O. Panosyan**

Quantity of aerobic chemoorganotrophic bacteria was determined and evaluation of sanitary microbi-

ological status of water of the Gavaraget River was evaluated. The colony forming units of aerobic chemoorganotrophic bacteria in studied water samples is varied from 5 (river head) to 1520 (down river up to estuary). Sanitary bacteriological indicators exceed accepted standards for river waters, which is indicated the presence of anthropogenic pollution in river ecosystem.

## **ԹԹՎԱՌՎՈՒՅՑԻ ՏԵՐԵՎՆԵՐՈՒՄ ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ԱՌԱՋԱՎՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՄՈՆԻԱԿՈՎ ԱԴՏՈՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

**Զ. Ս. ԲԱՌՎՅԱՆ**

Կենսաբանական գիտությունների դոկտոր,

ԵՊՀ պրոֆեսոր

**Վ. Ս. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ԵՊՀ մագիստրոս

**Տ. Վ. ՄԱՍԻԿՈՆՅԱՆ**

ԵՊՀ կրտսեր գիտական աշխատող

Ավտոտրոֆ օրգանիզմների կողմից կատարվող ֆոտոսինթեզը համարվում է բարդ և եղակի պրոցես, որն ապահովում է կյանքի հարատևությունը մեր մոլորակի վրա: Ֆոտոսինթեզի շնորհիվ ֆոտոսինթեզային ապարատում արեգակնային տեսանելի և մոտակա ինֆրակարմիր ճառագայթային էներգիայի օգտագործմամբ առաջանում են օրգանական մոլեկուլներ և մոլեկուլային թթվածին: Ֆոտոսինթեզի առաջնային ֆոտոֆիզիկական և ֆոտոքիմիական պրոցեսները ընթանում են ֆոտոսինթեզային ապարատի թիլակոիդային թաղանթներում: Վերջիններիս կառուցվածքն ու ֆունկցիան խստ զգայում են էկզոգեն և էնդոգեն գործոնների ազդեցության նկատմամբ: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի բույսերի ֆոտոսինթեզի առաջնային պրոցեսների կարգավորման մեխանիզմների պարզաբանումը մթնոլորտում ազոտ պարունակող թունավոր գազերով աղտոտման դեպքում: Նման հետազոտություններն ունեն տեսական և կիրառական նշանակություն: Դրա մասին վկայում է մեր կողմից հայտնաբերված հիավերքումային էֆեկտը (2), որը տեղի է ունենում ազոտ պարունակող գազերի ազդեցության հետևանքով: Բույսերի տերևների կլանման սպեկտրներում հիավերքումային էֆեկտի առաջացման ռեաքտում ֆոտոսինթեզի ֆոտոֆիզիկական և ֆոտոքիմիական պրոցեսների խաթարման հետևանքով տեղի է ունենում արեգակնային էներգիայի կենսակունվերսիայի խստ կասեցում: Նկատի ունենալով այդ երևույթը, մեր կողմից մշակված է օդային և ջրային ավազաններն ազոտ պարունակող նյութերով աղտոտվածության կենսաֆիզիկական լազերային մոնիթորինգի իրականացման մեթոդը(7):

**Աշխատանքի նպատակը** համարվել է անթոցիաններ պարունակող բույսի տերևների սպեկտրային հատկությունների և ֆոտոսինթեզի առաջնային պրո-